



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ**

Բովանդակություն

Ներածություն

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև՝ Հանձնաժողով) 2010 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված նպատակի և Հանձնաժողովի խնդիրների իրականացման շրջանակներում ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, Հանձնաժողովի կողմից՝ 2010 թվականի ընթացքում իրականացվելիք մրցակցային քաղաքականության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները:

Ծրագիրն ապահովում է Հանձնաժողովի 2002-2009 թվականների տարեկան գործունեության ծրագրերի շարունակականությունը:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների քաղաքականումը

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային գործողությունների, մասնավորապես՝ գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխման և արգելման ուղղությամբ: Տնտեսության մրցակցային իրավիճակը, մասնավորապես՝ ապրանքային շուկայի համակենտրոնացման աստիճանը, մասնակիցների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը Հանձնաժողովի կողմից գնահատվել է ապրանքային շուկաների ուսումնասիրությամբ և նախորդ տարիներին ուսումնասիրված շուկաների դիտանցմամբ: Հանձնաժողովը 2009 թվականի հունվարից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրել է 36 ապրանքային շուկա (աղյուսակներ 1,2,3), և դիտանցում է իրականացրել կենտրոնացված գրանցամատյանում գրանցված 108 ապրանքային շուկաներում (օգտագործելով նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված տվյալները): Հանձնաժողովը հնարավոր հակամրցակցային համաձայնություններ հայտնաբերելու նպատակով անդրադարձել է մի շարք ապրանքային շուկաներում իրացման գների կիրառման քաղաքականությանը՝ («Բուսական յուղ», «Կարագ», «Հավի ձու՝ կճեպով», «Թփլասեր», «Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ», «Մսամթերք», «Ցորենի ալյուր», «Թեյ», «Սուրճ», «Կերակրի աղ, քարաղ (կերային)», «Ադամաթուզ (բանան)», «Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ», «Շամպայն և փրփրուն գինիներ», «Գարեջուր», «Հեռուստացույցներ», «Կենցաղային նպատակով օգտագործվող սառնարաններ», «Կենցաղում

օգտագործվող լվացքի մեքենաներ»):

Մրցակցային իրավիճակի ուսումնասիրության համար ապրանքային շուկաների ընտրությունն իրականացվել է՝ հիմք ընդունելով նախորդ տարում ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող կամ խոշոր ընկերությունների լուծարման փաստը: Հաշվի առնելով ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ստեղծված իրավիճակը, Հանձնաժողովն իր գործունեությունը կենտրոնացրել է հատկապես սոցիալական նշանակության ապրանքային շուկաների ուսումնասիրության վրա՝ հիմքում դնելով իրականացվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկաներում հակամրցակցային համաձայնություններն ու գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումը բացահայտելուն ուղղված հարցերը:

2009 թվականին ուսումնասիրված ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը ներկայացված է աղյուսակներ 1, 2, 3-ում:

Դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 1

	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակա ռաիստվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Ապրանքային շուկայի մասնա կիցների թիվը	Կենտրոնացվա ծության աստի ճանը***	
			անվանումը	բաժինը (%)		տոկոս	աստի ճանը
1.	«Անզգայացնող դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	17.79	23	47.54	միջին
2.	«Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերիոդային հակաբորբոքային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Աոգո-Ֆարմ» ՍՊԸ	33.23	34	56.02	միջին
3.	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Ֆարմատեք» ՓԲԸ	28.27	24	58.42	միջին
4.	«Հակացնցումային, հակաէպիլեպսային դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	24.56	20	62.0	միջին
5.	«Հակավարակային դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Ֆարմատեք» ՓԲԸ	30.47	27	54.45	միջին
6.	«Հակամիգրենային դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Ֆարմ Գոհար» ՍՊԸ	14.86	16	39.13	ցածր
7.	«Հակապարկինոնային դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Օրիենտ ֆարմ» ՍՊԸ	22.69	14	55.37	միջին
8.	«Արյան վրա ազդող դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Ֆարմատեք» ՓԲԸ	26.66	21	52.0	միջին
9.	«Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ»	2008թ.1-9 ամիսներ.	«Ամիկուս» ՍՊԸ** «Լիկվոր» ՓԲԸ **	31.94	6	82.05	բարձր
10.	«Սիրտանոթային դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Արֆարմացիա» ՓԲԸ	15.85	30	38.64	ցածր
11.	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	2008թ.1-9 ամիսներ	«Ֆարմատեք» ՓԲԸ*	42.5	32	60.99	միջին

12.	«Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	2008թ.1-9 ամիսներ	«Արսենի ԱԱՍ» ՍՊԸ	17.18	24	49.24	միջին
13.	«Սիզամուղներ»	2008թ.1-9 ամիսներ	«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Չ ՍՊԸ	30.33	21	54.25	միջին
14.	«Ստամոքսաղիքային դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	17.88	29	44.21	ցածր
15.	«Հորմոններ, այլ ներզատային դեղեր, հակաբեղմնավորիչներ»	2008թ.1-9 ամիսներ	«Ս.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ*	36.25	24	74.38	բարձր
16.	«Իմունաբանական դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ*	42.34	16	66.8	միջին
17.	«Սկանային ապալարիչներ (ծայրանդամային ազդեցության), խոլինեսթերազի արգելակիչներ»	2008թ.1-9 ամիսներ	«Վագա Ֆարմ» ՍՊԸ*	39.53	16	70.32	բարձր
18.	«Ակնաբուժական դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Լիկվոր» ՓԲԸ	27.97	24	52.2	միջին
19.	«Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ»	2008թ.1-9 ամիսներ	«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Չ ՍՊԸ*	43.47	11	81.0	բարձր
20.	«Հոգեմետ դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Էսկուլապ» ՍՊԸ	22.07	15	63.29	միջին
21.	«Շնչառական համակարգի վրա ազդող դեղեր»	2008թ.1-9 ամիսներ	«Ֆարմատեք» ՓԲԸ	25.58	26	44.85	ցածր
22.	«Ջրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներ»	2008թ.1-9 ամիսներ	«Ֆարմատեք» ՓԲԸ*	49.29	14	87.96	բարձր
23.	«Վիտամիններ և հանքանյութեր»	2008թ.1-9 ամիսներ	«Էսկուլապ» ՍՊԸ	16.87	25	37.88	ցածր

* տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:

** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:

*** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե $70\% \leq CR-3 \leq 100\%$, միջին աստիճան՝ եթե $45\% \leq CR-3 < 70\%$, ցածր աստիճան՝ եթե $CR-3 < 45\%$: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը հաստատելու մասին» թիվ 854-Ն հրամանով հաստատված դեղերի դասակարգման խմբերի հիման վրա որոշվել և ուսումնասիրվել են դեղերի շրջանառության ոլորտի թվով 23 ապրանքային շուկաներ: Դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրությունն իրականացվել է 2008 թվականի 9 ամիսների տվյալների հիման վրա: Նշված ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքներից երևում է, որ 5 ապրանքային շուկա ցածր կենտրոնացված է, 13 ապրանքային շուկա՝ միջին կենտրոնացված, 5-ը՝ բարձր կենտրոնացված: Նշված ապրանքային շուկաներից 7-ում թվով յոթ տնտեսվարող սուբյեկտներ համարվել են գերիշխող դիրք ունեցող: Ընդ որում, մեկ ապրանքային շուկայում երկու տնտեսվարող սուբյեկտներ իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: Մեկ տնտեսվարող սուբյեկտ գերիշխող դիրք ունեցող է համարվել երկու ապրանքային շուկաներում:

Մի շարք ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 2

	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Ապրանքային շուկայի մասնա կիցների թիվը	Կենտրոնաց վածության աստիճանը**	
			անվանումը	բաժինը (%)		տոկոս	աստիճանը
1.	«Լրատվական թերթերի տարածում»	2008 թ. 2-րդ կիսամյակ	«Պրեսա Ստենդ» ՍՊԸ*	55.4	9	81.7	բարձր
2.	«Հեռուստաձրագրերի տարածում»	2008 թ. 2-րդ կիսամյակ	«Հայփոստ» ՓԲԸ*	71.4	9	93.5	բարձր
3.	«Ամսագրերի, հանդեսների տարածում»	2008 թ. 2-րդ կիսամյակ	«Հայփոստ» ՓԲԸ*	78.5	9	92.7	բարձր
4.	«Լրագրային թուղթ»	2008	«Դեքստեր» ՍՊԸ	29.3	9	63.5	միջին
5.	«Կենցաղում օգտագործվող շիկացման լամպեր»	2008	«Լևոն և Սեդա» ՍՊԸ	18.8	184	45.7	միջին
6.	«Կենցաղում օգտագործվող գազապարպումային լամպեր»	2008	«Սոֆ-Սուս» ՍՊԸ*	56.0	140	78.3	բարձր
7.	«Կարագ»	2008	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	47.85	23	84.1	բարձր
8.	«Պաղպաղակ»	2008	«Աշտարակ Կաթ» ՓԲԸ*	39.3	16	70.4	բարձր

* տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:

** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե $70\% \leq CR-3 \leq 100\%$, միջին աստիճան՝ եթե $45\% \leq CR-3 < 70\%$, ցածր աստիճան՝ եթե $CR-3 < 45\%$: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Այս ապրանքային շուկաներից 6-ը բարձր կենտրոնացված են, 2-ը՝ միջին կենտրոնացված: Բարձր կենտրոնացված ապրանքային բոլոր շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: «Կենցաղում օգտագործվող լամպեր» ապրանքային շուկան ուսումնասիրվել է երկրորդ անգամ՝ պայմանավորված նշված ապրանքային շուկայում «Գրանդ Սան» ընկերության կողմից գերիշխող դիրքի կորստով: «Կարագ» և «Պաղպաղակ» ապրանքային շուկաների, ինչպես նաև մի շարք ապրանքային շուկաների ուսումնասիրությունը կրում է շարունակական բնույթ և ըստ տարիների կատարված ուսումնասիրությունների արդյունքների համեմատական վերլուծությունը ներկայացվում է աղյուսակ 4-ում:

Մի շարք ապրանքային շուկաներում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները և ապրանքային շուկայի մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 3

	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Կենտրոնացվածության աստիճանը*	
			անվանումը	բաժինը (%)		տոկոս	աստիճանը
1.	«Երկաթուղային տրանսպորտի ծառայություններ»	2008	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	100	1	100	բարձր
2.	«Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայություններ»						
3.	«Երկաթուղային ուղևորափոխադրումների ծառայություններ»						
4.	«Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ»	2008	Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն» ՍՊԸ	100	1	100	բարձր
5.	«Համակարգչային գլոբալ ցանցի «.am» տիրույթում հանգուցային անվանումների գրանցման, սպասարկման, համակարգման և կառավարման ծառայություններ»	2008	«Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ	100	1	100	բարձր

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե $70\% \leq CR-3 \leq 100\%$, միջին աստիճան՝ եթե $45\% \leq CR-3 < 70\%$, ցածր աստիճան՝ եթե $CR-3 < 45\%$: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Երկաթուղային ծառայությունների ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրությունը պայմանավորված է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի փոփոխությամբ: Իսկ մյուս երկու ապրանքային շուկաներում ուսումնասիրությունն իրականացվել է այդ շուկաների առանձնահատկություններից ելնելով: Գ-ժանկարներում (1,2,3,4) ներկայացված են ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը բնութագրող ցուցանիշները:



Դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներ

ապրանքային շուկաներում կենտրոնացվածության
աստիճանը

զժանկար 1


ապրանքային շուկաներում առաջատար տնտեսվարող
սուբյեկտների բաժինները

զժանկար 2



Աղյուսակ 2-ում ներկայացված ապրանքային շուկաներում կենտրոնացվածության աստիճանը և
առաջատար տնտեսվարող սուբյեկտների բաժինները

զժանկար 3



Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով Հանձնաժողովն այս տարի հիմնականում զերծ է մնացել կտրուկ միջոցառումների՝ այսպես կոչված, խիստ վարչարարության կիրառումից: Այսպիսով, Հանձնաժողովի կողմից իրականացվող գործառնությունների մեծ մասը կրում էր կանխարգելիչ բնույթ: Հանրապետության ապրանքային շուկաների մեծ մասում

առկա են այնպիսի գործոններ, որոնք նպաստում են ընկերությունների միջև համաձայնության (հակամրցակցային) կնքմանը. մասնավորապես՝ ընկերությունների ոչ մեծ թիվը մի շարք ապրանքային շուկաներում, արտադրության միջին ծախսերի և նրանց կառուցվածքի, տեխնոլոգիայի նույնանման մակարդակը, երկարաժամկետ հեռանկարում առաջարկի գերազանցումը պահանջարկին, արտադրական հնարավորությունների ավելցուկի առկայությունը:

Տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և կանխումը բավականին ժամանակատար է և դժվար ապացուցելի: Դա պայմանավորված է Օրենքում հակամրցակցային համաձայնությունների մասին դրույթների ոչ միանշանակ սահմանումներով, կնքվող համաձայնությունների գրավոր ամրագրված չլինելու (հիմնականում դրանք կրում են բանավոր բնույթ), ինչպես նաև փաստաթղթային ստուգումների ընդգրկման շրջանակների սահմանափակման հանգամանքներով: Նշված գործոնները մրցակցային մարմնին թույլ չեն տալիս ժամանակին ապահովել տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցությունը սահմանափակող համաձայնեցված գործողությունների կանխումը:

Հանձնաժողովը 2009 թվականի հունվարից մինչև ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում սոցիալական նշանակության մոտ 20 ապրանքատեսակների գների դիտանցում է իրականացրել՝ գների հիմնավորվածությունը պարզելու նպատակով: Իրականացված դիտանցման արդյունքների համաձայն, Երևանի 16 առևտրի օբյեկտներում կարագի, հացի, ձեթի, պանրի, բրնձի, ալյուրի, սուրճի, մսի, ձվի գները հիմնականում կայուն էին, որոշ դեպքերում նվազել էին, ինչին նպաստել են նաև տնտեսվարող սուբյեկտներին մրցակցության օրենսդրության պահանջները խախտելու և դրանք հետագայում բացառելու համար Հանձնաժողովի կողմից տրված նախազգուշացումները:

Սակայն մարտի 3-ին Կենտրոնական բանկի կողմից դրամի լողացող փոխարժեքի անցման քաղաքականության անցումը խուճապ առաջացրեց տնտեսվարող սուբյեկտների մոտ: Նույն օրը Հանձնաժողովը նախազգուշացրեց տնտեսվարող սուբյեկտներին՝ գերծ մնալ վերոհիշյալ պատճառաբանությամբ գների չհիմնավորված բարձրացումներից, գերիշխող դիրքի չարաշահումներից կամ հակամրցակցային համաձայնություններից:

Հանձնաժողովի որոշմամբ՝ սոցիալական նշանակության որոշ ապրանքային շուկաներում¹ գործող մի շարք տնտեսվարող սուբյեկտներից Օրենքի հնարավոր խախտումների հայտնաբերման նպատակով տեղեկատվություն է պահանջվել կիրառվող իրացման գների վերաբերյալ՝ 2009 թվականի փետրվարի 28-ի և մարտի 5-ի դրությամբ:

Հանձնաժողովը սոցիալական նշանակության չորս ապրանքային շուկաներում (բուսական յուղ, կարագ, դեղեր, կենցաղային տեխնիկա) վարույթներ է հարուցել տնտեսվարող սուբյեկտների կողմից գների չհիմնավորված բարձրացումների, արհեստական դեֆիցիտի ստեղծման, կնքված հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով:

¹ «Հավի ձու՝ կնեպով», «Թթվասեր», «Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված կաթ)», «Մսամթերք», «Շամպայն և փրփրուն գինիներ», «Կերակրի աղ, քարաղ (կերային)», «Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ», «Գարեջուր», «Արամաթուզ (բանան)», «Թեյ», «Սուրճ», «Ցորենի ալյուր», «Կարագ», «Բուսական յուղ», «Հեռուստացույցներ», «Կենցաղային նպատակով օգտագործվող սառնարաններ», «Կենցաղում օգտագործվող լվացքի մեքենաներ», ինչպես նաև դեղորայքի շրջանառության ոլորտի մի շարք ապրանքային շուկաներ

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից արձանագրվել էին նաև կարագի և բուսական յուղի իրացման գների բարձրացումներ: 2009 թվականի մարտի 3-5-ը կարագի և բուսական յուղի իրացման գների բարձրացումներն արձանագրվել են հիմնականում իրացման մանրածախ ցանցում, իսկ արդեն մարտի երկրորդ կեսից տարադրամի շուկայում փոխարժեքի կայունացումից հետո նկատվել է կարագի իրացման գների նվազում: Կենցաղային տեխնիկայի իրացման ոլորտում գործող մի շարք տնտեսվարող սուբյեկտներ նշված ժամանակահատվածում բարձրացրել են կենցաղային ապրանքների իրացման գները՝ արտարժույթի փոփոխության արդյունքում: Գների բարձրացումը տնտեսվարողները հիմնավորել են արտարժույթի փոխարժեքի բարձրացմամբ, ինչպես նաև միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ: Սակայն, իրավիճակի կայունացման հետ մեկտեղ, նշված ոլորտում ընկերությունների կողմից կիրառվեցին զեղչային համակարգեր և գների նվազում նկատվեց:

Այսպիսով, Հանձնաժողովին հաջողվել է կանխել մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահումները և հակամրցակցային համաձայնությունները, որոնք կարող էին պատճառ հանդիսանալ գների տնտեսապես չհիմնավորված բարձրացման համար: Հանձնաժողովը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին տրամադրել է առևտրի այն կետերի տվյալները, որտեղ մարտի 3-6-ը, տարադրամի փոխարժեքի տատանման պատճառաբանությամբ, արձանագրվել է առաջին անհրաժեշտության մի քանի ապրանքատեսակների գների աճ: Համաձայն մարզերից ստացված տվյալների, մարզերում շաքարավազը, կարագը, բուսական յուղը, բրինձը և այլուրը իրացվում էին ավելի բարձր գներով, քան Երևան քաղաքում: Պետական եկամուտների կոմիտեին տրամադրված ցանկում ընդգրկված էին նաև մարզերում գործող տնտեսվարող սուբյեկտները:

Հանձնաժողովն ուսումնասիրել է (01.09.08-01.09.09թթ.) նախկինում ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաներ, որտեղ գործում են գրանցամատյանում գրանցված տնտեսվարող սուբյեկտներ՝ գերիշխող դիրքի կորստի, տնտեսվարող սուբյեկտի բաժնի փոփոխության և այլ տվյալների բացահայտման նպատակով:

Նախկինում ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 4

	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը		Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը*		Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի առկայությունը (+/-)		Առաջատար տնտեսվարող սուբյեկտի բաժինը (տոկոս)	
		նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.
1.	«Թթվասեր»	39	18	60.4	84.7	+	+	39.6	60.2
2.	«Պաղպաղակ»	13	16	85.6	70.4	+	+	33.9	42.5
3.	«Կարագ»	33	23	72.4	84.0	+	+	36.2	47.9
4.	«Բրինձ»	29	19	54.5	66.6	-	-	22.3	23.7

5.	«Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ»	36	74	58.2	45.4	+	-	35.1	20.2
6.	«Հավի ձու՝ կճեպով»	12	13	93.1	85.9	+	+	39.6	42.5
7.	«Լվացքի փոշի (ձեռքի վազքի համար)»	44	45	68.8	46.3	+	-	47.0	16.5
8.	«Տնտեսական օճառ»	26	13	56.0	88.7	+	+	35.4	46.3

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե $70\% \leq CR-3 \leq 100\%$, միջին աստիճան՝ եթե $45\% \leq CR-3 < 70\%$, ցածր աստիճան՝ եթե $CR-3 < 45\%$: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

2008-2009 թվականների ընթացքում ուսումնասիրվել են նախկինում ուսումնասիրված 8 ապրանքային շուկաներ, որոնցում ընդհանուր առմամբ գործել են 221 տնտեսվարող սուբյեկտներ: Նախորդ ուսումնասիրության համեմատ դրանց թիվը նվազել է 11-ով: Ընդ որում, ապրանքային շուկաներից 4-ում տնտեսվարող սուբյեկտների թիվը նվազել է, դրանցից երեքը ներկրման շուկաներ են, իսկ մյուս 4 ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների թիվը աճել է, որոնցից երեքը տեղական արտադրության շուկաներ են:

Եթե նախորդ ուսումնասիրության ժամանակ նշված ութ ապրանքային շուկաներից 3-ը բարձր կենտրոնացված են, իսկ 5-ը՝ միջին կենտրոնացված, ապա վերջին ուսումնասիրության արդյունքում պատկերը փոփոխվել է. արդեն 3–ն են միջին կենտրոնացված և 5-ը՝ բարձր կենտրոնացված, ինչը պայմանավորված է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների բաժինների աճով:


Միաժամանակ, եթե նախորդ ուսումնասիրության ընթացքում 7 ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, ապա այս ուսումնասիրության արդյունքում տնտեսվարող սուբյեկտները գերիշխող դիրք են զբաղեցնում միայն 5 ապրանքային շուկաներում: Հարկ է նշել, որ եթե նախորդ ուսումնասիրության ընթացքում առաջատար տնտեսվարող սուբյեկտների բաժինները տատանվում էին 22.3%-47.0% միջակայքում, ապա վերջին ուսումնասիրության արդյունքում կազմել է 20.2 % ից մինչև 60.2 %:

Արդի պայմաններում բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերահսկումը կրում է ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական նշանակություն: Նման հսկողության նպատակն է տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն ուղղորդել շուկայական տնտեսության կանոնների պահպանմանը:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է գտնվում կենտրոնացված գրանցամատյանում գրանցված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը (իրացման ծավալը, գինը, ինքնարժեքը, ինքնարժեքի կառուցվածքը և դրանց փոփոխությունները յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով): Գրանցամատյանում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների կազմն ըստ ապրանքային խմբերի և գործունեության տեսակների, (01.09.09թ.) ներկայացված են գծանկար 4-ում:

Գրանցամատյանի վարումը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս պարբերաբար հետևելու ռեեստրում գրանցված տնտեսվարող սուբյեկտների վարքագծին, հատկապես բացահայտելու նրանց կողմից գերիշխող դիրքի չարաշահման դեպքերը, ինչպես նաև վերահսկելու ապրանքային շուկաներում տնտեսական համակենտրոնացման միտումները:

Գրանցամատյանում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների կազմն ըստ ապրանքային խմբերի և գործունեության տեսակների (01.09.09թ. դրությամբ)



Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում քիչ է անդրադարձել այս գործառնության օրենսդրության որոշ դրույթների տարաբնույթ մեկնաբանության առկայության, համապատասխան տեղեկատվական բազայի բացակայության և ոչ մեծ թվով դիմումների պատճառով: Սակայն, տնտեսությունում ճգնաժամային իրավիճակի հետևանքով վերջերս արձանագրվել են համակենտրոնացման հայտարարագրման դիմումներ, որի պատճառը ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունն է:

2009 թվականի հունվարից Հանձնաժողովը հարուցել է համակենտրոնացմանն առնչվող 3 վարչական վարույթ: Այսպես, «Կասկադ Բանկ» և «Կասկադ կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպությունները դիմել էին Հանձնաժողով՝ հայտնելով, որ Բանկի հետ փոխկապակցված ընկերության («Կասկադ կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն)՝ Բանկին միանալու վերաբերյալ որոշում է կայացվել: Բանկի և ընկերության վերակազմակերպման պատճառներն են վերջիններիս գործունեության նույն ոլորտը, ակտիվների արդյունավետ օգտագործումը, ֆինանսական շուկայում իրենց կողմից մատուցվող ծառայությունների մասով մրցունակության ավելացումը և հետագա աճը, կառավարումը ռացիոնալ դարձնելու սկզբունքը, ծախսերի կրճատման արդյունքում եկամտաբերության ավելացումը և այլն: Քննարկելով բանկի և ընկերության համակենտրոնացման վերաբերյալ հարցը և հաշվի առնելով, որ առկա չեն ընկերությունների համակենտրոնացումն արգելելու վերաբերյալ հանգամանքներ, Հանձնաժողովը որոշել է, որ բանկի և ընկերության համակենտրոնացումը ենթակա է թույլատրման:

Երկրորդ դեպքում, «ՌԳՄ-Ստոլիցա» և «Ար Ջի Էս Ասեթս Լիմիթեդ» ընկերությունները հանձնաժողով էին ներկայացրել երկու ընկերությունների համակենտրոնացման հայտարարագրեր: Հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ երկու ընկերություններն էլ գործում են ՀՀ տարածքից դուրս և ոչ ռեզիդենտ կազմակերպություններ են, հետևաբար տնտեսական

մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության տեսանկյունից, գործարքը քննարկման ենթակա չէր:

Երրորդ դեպքում, «Սարանիստ» և «Արմ Գլաս» ընկերությունները դիմել էին Հանձնաժողով հայտնելով, որ ընկերություններն ունեն մեկ սեփականատեր, որը նպատակ ունի միացնել ընկերությունները: Ըստ ընկերությունների կողմից ներկայացված տվյալների, նշված միացման արդյունքում ապրանքային շուկայի մրցակցային իրավիճակը էականորեն չի փոխվի: Ելնելով վարույթի արդյունքներից, Հանձնաժողովը որոշել է, որ ընկերությունները հանդիսանում են անձանց խումբ՝ մեկ տնտեսավարող սուբյեկտ, ուստի հնարավոր չէ դիտարկել մեկ տնտեսավարող սուբյեկտի համակենտրոնացման հայտարարագրման վերաբերյալ հարցը:

Հանձնաժողովի խնդիրներից է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից կիրառվող անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերումն ու արգելումը: Հաճախ հանդիպող դրսևորումներից են գործարար հեղինակության անօրինական օգտագործումը, երբ որևէ կերպ օգտագործվում է հանրաճանաչ կազմակերպության անվանումը, որի արտադրանքը ունի համբավ, ինչը հիմնականում հանդիպում է ակոնոլային և ոչ ակոնոլային խմիչքների ապրանքային շուկաներում:

Այսպես, «Ալեքս-Գրիգ» ընկերության կողմից օդու արտադրության և իրացման ընթացքում ուկրաինական («Սոյուզ Վիկտան») ընկերությանը պատկանող «Medoff» («Մեդոֆֆ») անվանումով օդու ապրանքային նշանին և արտաքին տեսքին շփոթության աստիճան մման «Medofe» («Մեդոֆե») անվանումով ապրանքային նշանի օգտագործումը, որը կարող էր շփոթություն առաջացնել այլ տնտեսավարող սուբյեկտի պատկանող ապրանքային նշանի նկատմամբ, Հանձնաժողովի կողմից որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Մեկ այլ դեպքում, վերը նշված ընկերության կողմից արտադրվող և իրացվող («Պրեզիդենտսկիյ ստանդարտ») անվանումով օդու պիտակների վրա Ուկրաինայի պետական դրոշի և գերբի զետեղումը, ինչպես նաև պիտակների վրա օդու վերաբերյալ ծանոթագրական գրառումները ուկրաիններեն կատարելը այն դեպքում, երբ տվյալ օդին արտադրվում և իրացվում էր Հայաստանում, կարող էր առաջացնել հասարակության մոլորեցում ապրանքի աշխարհագրական ծագման նկատմամբ, Հանձնաժողովը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն: Օրենքի յուրաքանչյուր խախտման համար «Ալեքս-Գրիգ» ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով:

ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը գրությամբ, հետագա ընթացքը լուծելու համար, Հանձնաժողովին է տրամադրել «Նաիրիտ» ապրանքային նշանը ապօրինի օգտագործելու վերաբերյալ նախապատրաստված նյութերը: Ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Նաիրիտ գործարան» ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ապրանքային նշանը ապօրինի օգտագործվել է այլ տնտեսավարող սուբյեկտների կողմից, ինչը սպառողների մոտ կարող էր առաջացնել շփոթություն «Նաիրիտ գործարան» ընկերության ապրանքային նշանի նկատմամբ: Տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրված և իրացված սոսինձների պիտակների վրա

«NAIRIT» («Նաիրիտ») ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը համարվել է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Տնտեսվարող սուբյեկտներին տրվել է նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:

Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև ազգային վիճակագրական ծառայության տվյալները փաստում են ապրանքային շուկաներում մրցակցության խեղաթյուրման մեկ այլ դրսևորման՝ ստվերային շրջանառության մասին, որը պաշտոնական տվյալների համաձայն, կազմում է 40 տոկոս: Հանրապետությունում ստվերային շրջանառության առանձնահատկությունն այն է, որ ստվերային գործարքները կատարվում են տնտեսական լեզավ (օրենքով թույլատրված) շրջանառության ոլորտներում, նպատակ ունենալով շրջանառության որոշ մասը թաքցնել հարկային դաշտից:

Ապրանքային շուկաների մեծ մասում գործող տնտեսվարող սուբյեկտների սահմանափակ թիվը նպաստում է հակամրցակցային համաձայնությունների առաջացման հնարավորությանը, որոնց առարկան որոշ դեպքերում կարող են դառնալ ստվերային շրջանառության ծավալները: Այսպես, պաղպաղակի ապրանքային շուկայում, հիմք ընդունելով պաղպաղակի իրացման ծավալների պաշտոնական տվյալները, կարելի է ենթադրել հնարավոր հակամրցակցային համաձայնություն առկայության մասին: 2004 թվականի տվյալներով, ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում պաղպաղակի իրացման ծավալը կազմել է 1466.6 տոննա, ինչը, բնականաբար, կասկած է առաջացրել ներկայացված տվյալների հավաստիության մասին, որից հետո ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ: 2007 թվականի տվյալներով, իրացման ծավալը կազմել է 2310.3 տոննա, որը 57.5 տոկոսով ավելի է, քան 2004 թվականին: Սակայն, 2008 թվականի տվյալներով, ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքներով իրացման ծավալը կազմել է ընդամենը 1897.8 տոննա կամ 82.1 տոկոս, 2007 թվականի տվյալների նկատմամբ, ինչը նույնպես կասկած է հարուցում: ԱՎԾ-ի տվյալներով, Հանրապետությունում 1990 թվականին արտադրվել է 10.9 հազ. տոննա պաղպաղակ (1985թ.-9.4 հազ.տոննա), ուստի, դժվար է պատկերացնել, որ 2008 թվականին Հանրապետությունում արտադրվել է 6 անգամ պակաս, քան 1990 թվականին՝ հաշվի առնելով ապրանքային շուկայի զարգացած ենթակառուցվածքը, և, մասնավորապես, տեղադրված սառնարանների թիվը (ստվերը կարող է կազմել 4.5 հազ. տոննա):

Այսպիսի օրինակներ սննդի ապրանքային շուկաներում քիչ չեն: 2008 թվականի տվյալներով, «Կարագ» ապրանքային շուկայում կարագի իրացման ծավալը կազմել է 4143.3 տոննա, իսկ իրացված արտադրանքի արժեքը 4385.6 մլն. դրամ: 2006 թվականին իրացման ծավալը կազմել է միայն 2914.2 տոննա, որը 1229.1 տոննա կամ 29.7 տոկոսով պակաս է, քան 2004 թվականին: Այս կապակցությամբ Հանձնաժողովը համապատասխան առաջարկություններ է ներկայացրել պետական եկամուտների կոմիտեին: 2008 թվականի տվյալներով, իրացման ծավալը կրկին աճեց և տարօրինակ ձևով համընկավ 2004 թվականի իրացման ծավալի մակարդակի հետ՝ կազմելով 4143.3 տոննա (տարբերությունը կազմում է 0.4 տոննա կամ 0.01 տոկոս): Այստեղ հնարավոր է հակամրցակցային համաձայնության առկայություն՝ ներկրման ծավալներով առաջատար տնտեսվարող սուբյեկտների միջև: Այդպիսի համաձայնության հնարավորության

մասին վկայում է նաև այն փաստը, որը վերջին յոթ տարիների ընթացքում այս ապրանքային շուկայում իրացման ծավալներով առաջին երեք տնտեսվարող սուբյեկտների կազմը գրեթե չի փոփոխվել: Ընդ որում, 2004 թվականի տվյալների համաձայն, նրանց ընդհանուր բաժինն ապրանքային շուկայում կազմել է 72.4 տոկոս, 2006 թվականին՝ 80.2 տոկոս, իսկ 2008 թվականին՝ 84.1 տոկոս: Փաստորեն, այս տնտեսվարող սուբյեկտները վերահսկում են կարագի ապրանքային շուկայի ծավալների ավելի քան 4/5-րդ մասը:

«Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում հակամրցակցային համաձայնությունների հնարավորությունը պայմանավորված է ոչ թե արտադրության և իրացման ծավալով, այլ ապրանքի մինչև վերջնական սպառող հասնելու ընդհանուր սխեմաների օգտագործմամբ: Արդյունքում, գների աճ է առաջանում առևտրային միջնորդների շղթայով ապրանքի շարժի ընթացքում, որոնց գործունեությունը թափանցիկ չէ, և որոնց հանդեպ հնարավոր չէ կիրառել մրցակցային օրենսդրությունը: Ի դեպ, այդ կազմակերպությունները ստեղծվում են արտադրող ընկերությունների մասնակցությամբ:

Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները, գիտակցելով իրենց պատասխանատվությունը, հիմնականում պահպանում են մրցակցության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից բազմիցս ուսումնասիրվել է «Զվարթնոց» օդանավակայանում լիցքավորվող ավիավառելիքի գների հիմնավորվածությունը, որոնց արդյունքում առաջարկվել է ավիավառելիքի բացթողնման գների հաշվարկի հատուկ մեթոդիկա, որի հիմքում դրված է առավելագույն «մարժան», ինչն ընկերությանը թույլ է տալիս ընկերությանը ապահովել անհրաժեշտ շահութաբերություն: Արդյունքում, հուլիս ամսվա ընթացքում նավթի գների աճը միջազգային շուկաներում չի անդրադարձել «Զվարթնոց» օդանավակայանում ավիավառելիքի գների վրա: Ավիավառելիքը վաճառվում էր ֆիքսված գնով և գների աճ տեղի չի ունեցել, նաև այն բանի շնորհիվ, որ կազմակերպությունը նախկինում ունեցել է ավելի ցածր գնով ձեռք բերված վառելիքի մեծ պաշարներ:

Մեկ այլ դեպքում, հաշվի առնելով գազի և էլեկտրաէներգիայի սակագների կտրուկ աճը, «Գ-աջ» ընկերությունը Հանձնաժողովին տեղեկացրել է 1 տոննա գազի բացթողնման գների 20%-ի սահմաններում հարկադրված բարձրացման մասին: Հանձնաժողովը քննարկել է «Գ-աջ» ՍՊԸ-ի դիմումը, ներկայացված փաստարկները և գազի բացթողնման գների բարձրացումը ընդունել ի գիտություն: Ընդ որում, չնայած, որ գների բարձրացումը տեղի է ունեցել 2009 թվականի ապրիլի 1-ից, ընկերությունը բաց թողնման գները բարձրացրել է 2009 թվականի հուլիսի 1-ից:

Անցած տարվանից 2009 թվական են փոխադրվել մի քանի կարևոր գործեր: Մեկը կապված է «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության հետ, որի գործունեության վերաբերյալ մի շարք տնտեսվարող սուբյեկտներից ստացվել են բողոքներ՝ կապված երկաթուղով փոխադրումների սակագների կտրուկ բարձրացման հետ: Սակագների կտրուկ և միակողմանի բարձրացումը՝ առանց համոզիչ հիմնավորվածության, կարող էր հանգեցնել տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող և նախատեսվող արտահանման-ներկրման գործունեության սպակայունացման:

Հանձնաժողովի կողմից ընկերության նման գործողությունները կարող էին որակվել որպես բեռնափոխադրումների շուկայում գերիշխող դիրք գրավող տնտեսվարող սուբյեկտի կողմից գների անհիմն բարձրացում, ինչը հանդիսանում է մրցակցային օրենսդրության խախտում: Ներկայացված տեղեկությունների համաձայն, ընկերության կողմից 2008 թվականի 3-րդ եռամսյակում բեռնափոխադրումներից ստացված շահույթը ներկայացվել էր բացասական մեծությամբ: Հանձնաժողովի կողմից նշանակվել է ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից Հանձնաժողով է ներկայացվել սկզբնական հաշվառման փաստաթղթերին, ֆինանսական հաշվետվություններին չհամապատասխանող տեղեկատվություն, քանի որ ընկերությունում ուղևորա և բեռնափոխադրումների առանձնացված հաշվառում, ըստ ինքնարժեքի ծախսային հոդվածների, չի տարվում: Հանձնաժողովը ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու համար «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը նախազգուշացրել է, ինչպես նաև առաջարկել՝ հնարավոր սեղմ ժամկետում ներդնել ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացման ծախսերի առանձնացված հաշվառում: Հանձնաժողովի կողմից իրականացված ստուգման վերաբերյալ նյութերը տրամադվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը: Հանձնաժողովի կանխարգելիչ գործողություններն այդ փաստի վերաբերյալ նպաստել են «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության կողմից սակագնային քաղաքականության վերանայմանը: Արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն, կոնցեսիոն պայմանագրի մեջ մտցվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Այսպես, պայմանագրի լրամշակված տարբերակում ներառվել է դրույթ, որը կարգավորում է երկաթուղային սակագների որոշման կարգը: Այսպիսով՝ բացառվում է այն իրավիճակը, երբ սակագների բարձրացումը դառնում է իրականություն՝ միայն կոնցեսիոնների կողմից դրա վերաբերյալ միակողմանի հայտարարելու դեպքում:

Հանձնաժողովի գործունեության համար դեռևս հիմնախնդիր է Հանձնաժողովի ընդունած որոշմամբ տնտեսվարող սուբյեկտի կողմից սահմանված փաստաթղթերի և տեղեկատվության ժամանակին և ճշգրիտ ներկայացնելը: Տեղեկատվության ոչ ժամանակին և ոչ ճիշտ ներկայացնելը ձգձգում է ուսումնասիրության ժամանակահատվածը: Այսպես, 15 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոց է կիրառվել տեղեկատվություն չներկայացնելու համար: Այս տարի առաջին անգամ, Օրենքով սահմանված կարգով (Օրենքում համապատասխան փոփոխության համաձայն), Հանձնաժողովի կողմից տեղեկատվության հավաստիության ստուգումներ են նշանակվել դեղերի շրջանառության ոլորտում և «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունում:

Հանձնաժողովի խնդիրներից է հանդիսանում նաև Հանձնաժողովի համապատասխան որոշումների կատարումն ապահովելու համար դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա քննվող գործերի տևականությունը: Այսպես, դեռևս Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում են գտնվում Հանձնաժողովի 2008 թվականի հուլիսին «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» և 2008 թվականի սեպտեմբերին «Դ-վին հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» որոշումների կատարումն ապահովելու համար

դատարան ներկայացված հայցերը:

Օրենքի կիրառման փորձի հիման վրա Հանձնաժողովի կողմից իրականացվելիք օրենսդրական փոփոխությունները՝ ուղղված Հանձնաժողովի գործառույթների և իրավասությունների ընդլայնմանը, Օրենքի կիրարկման գործուն մեխանիզմների ստեղծմանը, կնպաստեն Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը, ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորմանը: Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարումը նախատեսվում է հետևյալ ուղղություններով. մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացված գնային փոփոխությունների, ինչպես նաև ընկերությունների լուծարման վերաբերյալ նախօրոք Հանձնաժողովին ծանուցելու պարտավորության սահմանում, հակամրցակցային համաձայնության վերաբերյալ Հանձնաժողովին տեղեկացնելու դեպքում՝ իրագրվող տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության բացառում («հանդուրժողականության սկզբունքի» սահմանում), Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման իրավասության ընդլայնում, Օրենքով կիրառվող տուգանքի ստորին և վերին շեմերի սահմանում, դատարանի կողմից Հանձնաժողովի որոշումների վերանայում միայն ընթացակարգային հարցերով, ինչպես նաև Օրենքում նշված մի շարք հասկացությունների հստակեցում:

Հանձնաժողովը սերտ համագործակցում է Կենտրոնական Բանկի, Հանրային ծառայությունների կարգավորման պետական հանձնաժողովի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների հետ:

Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև նախատեսված համագործակցության հուշագրի կնքման արդյունքում պետական գնումների նպատակով իրականացվող մրցույթներին ներգրավվելու են նաև Հանձնաժողովի աշխատակիցները:

Ճգնաժամի պայմաններում մրցակցային քաղաքականության դերը տնտեսության կարգավորման գործընթացում էապես աճում է: Հատկապես արդյունավետ մրցակցային քաղաքականության իրականացումն է նպաստում զգալի հասարակական ռեսուրսների բացահայտմանը, որոնք անհրաժեշտ են ճգնաժամային երևույթների հաղթահարման համար: Հանձնաժողովը՝ որպես ինստիտուցիոնալ կառույց, զգալի պոտենցիալ ունի տնտեսության առկա պայմաններում մրցունակ գործարար միջավայրի ստեղծմանն աջակցելու համար, սակայն աշխատավարձերը բավականին ցածր են մասնավոր հատվածի և Հայաստանի Հանրապետության համանման որոշ կառույցների աշխատակիցների աշխատավարձերից: Նախորդ տարիների համեմատ բյուջեի կրճատումը մասնագետների արտահոսքի պատճառ դարձան, իսկ մյուս կողմից՝ բյուջեի սղությունը շարունակում է սահմանափակել Հանձնաժողովի արդյունավետ գործունեությունը: Այդ խնդրի լուծման համար օրենքի առաջիկա լրամշակումներում նախատեսվում է սահմանել Հանձնաժողովի ֆինանսական անկախությունը (անհրաժեշտության դեպքում ֆինանսական այլընտրանքային միջոցների հետագա կիրառումը), որը հնարավորություն կտա ուժեղացնել վերջինիս կարողությունները, բարձրացնել կառույցի հեղինակությունը և շարունակել նպաստել արդյունավետ մրցակցային մարմնի կայացմանը:

Հանձնաժողովը ընդլայնելու է համագործակցությունը տարածաշրջանային համակարգող

կազմակերպությունների և միջազգային հաստատությունների՝ Համաշխարհային բանկի (ՀԲ/WB) և Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀ/GTZ), ինչպես նաև Եվրոպայի անվտանգության համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ/OSCE) հետ:

Մասնավորապես, աշխատանքներ են իրականացվելու Համաշխարհային բանկի փորձագետի 2009 թվականին ներկայացրած «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը և քաղաքականությունը. առաջնային բարելավման ուղղությունները» զեկույցում ամրագրված միջոցառումների իրագործման ուղղությամբ:

Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀ/ GTZ) «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» տարածաշրջանային համատեղ ծրագրի շրջանակներում աշխատանքներն ուղղվելու են Հայաստանի Հանրապետությունում հակամրցակցային համաձայնությունների իրավախախտումների բացահայտման գործընթացում հանդուրժողականության սկզբունքի (պատժամիջոցների մեղմման ծրագիր) ներդրմանն ու միջազգային փորձի կիրառմանը, Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման իրավասության ընդլայնմանը, աշխատակազմի կարողությունների զարգացմանը, ոլորտային կարգավորողների և Հանձնաժողովի միջև համակարգման հստակ մեխանիզմների խթանմանը, ԵՄ մրցակցային օրենսդրական նորմերի ներդաշնակեցմանը, ինչպես նաև հանրության շրջանում իրագեկվածության մակարդակի բարձրացմանը:

Եվրոպայի անվտանգության համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակում իրականացվելու են միջոցառումներ «Հակամրցակցային համաձայնություններ. մոնիտորինգի կանոններ և գնահատման մեթոդները» զեկույցում ամրագրված գործառույթների իրագործման նպատակով, հատկապես Հանձնաժողովի մոնիտորինգի և գնահատման մեխանիզմների ստեղծման, փաստաթղթային ստուգումների իրավունքի ընդլայնման (այդ թվում՝ գների դիտանցման և գների չհիմնավորվածությունը պարզելու նպատակով), ինչպես նաև մրցակցային օրենսդրության կիրառման արդյունավետությանն ու տնտեսական մրցակցության կանոնների վերաբերյալ հստակ պատկերացումների բարձրացմանն ուղղությամբ:

Միացյալ ազգերի կազմակերպության առևտրի և զարգացման կոնֆերանսի (ՄԱԿԱԶԿ/UNCTD) «Մրցակցության օրենքներ և քաղաքականություն» թեմայով փորձագետների միջկառավարական խմբի հանդիպման ժամանակ ձեռքբերված համաձայնության արդյունքում 2010 թվականին կազմակերպվելու և իրականացվելու են «Մրցակցության օրենսդրության և քաղաքականության կամավոր փորձագիտական գրախոսություն» խորագրով քննարկումներ Հայաստանի Հանրապետության օրինակով:

Ընդ որում, մինչև 2010 թվականի 1-ին կիսամյակի ավարտը Հանձնաժողովը նախատեսում է ավարտել Եվրոպական և ԱՊՀ մասնակից պետությունների մրցակցային օրենսդրության հետ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման հետ կապված գործողությունների իրականացումը, համապատասխան համաձայնագրերի կնքումը:

Ժամանակացույցը

Ծրագիրն իրենից ներկայացնում է Հանձնաժողովի կողմից իրականացվող հաջորդական միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը և օպերատիվ ձևով անդրադառնում են երկրում տնտեսական իրավիճակի փոփոխություններին: Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն Ծրագրի առաջին գլխում ներկայացված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակված փորձը, 2010 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականությունը՝ հետևյալ գերակա ուղղություններով.

- սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկաներում համաձայնեցված հակամրցակցային գործողությունների, գերիշխող (մենաշնորհ) դիրքի չարաշահման բնույթի խախտումների բացահայտմանը և դադարեցմանն ուղղված գործողությունների ուժեղացում,

- գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների համաձայնեցված հակամրցակցային գործողությունների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում,

- ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների և այլ շահագրգիռ մարմինների հետ մրցակցային արդյունավետ քաղաքականության ոլորտում համատեղ գործողությունների իրականացում,

- մրցակցության փաստարկման և քարոզչությանն ուղղված աշխատանքների ուժեղացում,

- տնտեսական մրցակցության օրենսդրական հարցերում հասարակության տեղեկացվածության ապահովման աջակցություն,

- պետական աջակցության տրամադրման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ձևավորում՝ վերջինիս ազդեցությունը մրցակցության վրա հնարավորինս նվազեցնելու նպատակով:

Նշված ուղղություններով գործողությունները Հանձնաժողովը ծրագրում է իրականացնել հետևյալ միջոցառումների միջոցով.

1. ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում,

2. հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում, կանխում և արգելում,

3. ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում,

4. համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն, տնտեսվարող սուբյեկտների կամ տնտեսվարող սուբյեկտների խմբի շուկայական իշխանության առաջացման կամ ուժեղացման արդյունքում հակամրցակցային գործողությունների իրականացման հնարավորության կանխում,

5. անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում,

6. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում,

7. ազատ տնտեսական մրցակցությունը սահմանափակող վարչական խոչընդոտների հայտնաբերում և դադարեցում,

8. տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության ստուգում, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում,

9. գանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում,

10. օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերում, պետական գնումների ոլորտում արդյունավետ վերահսկման ապահովում

11. հասարակության տեղեկացվածության բարձրացում,

12. տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակում, միջազգային համագործակցություն:

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Աղյուսակ 5

h/h	Միջոցառում	Ժամկետ
1.	<i>Ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում</i>	
	տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում, նախկինում չուսումնասիրված ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն	յուրաքանչյուր եռամսյակ
	նախկինում ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում:	տարվա ընթացքում
2.	<i>Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում և դադարեցում</i>	
	իրացման կամ ձեռքբերման խտրական և (կամ) տարբերակված գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում և գնահատում,	ստացված դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում,	
	միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն,	

	համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն:	
3.	<i>Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում</i>	
	իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանման, կիրառման, կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերում,	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների, լրացուցիչ պարտավորությունների պարտադրման դեպքերի հայտնաբերում,	
	գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այլ գործողությունների բացահայտում, որոնք հանգեցնում են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելու խոչընդոտների (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելուն:	
4.	<i>Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն</i>	
	տնտեսվարող սուբյեկտների միացումների կամ միաձուլումների, մեկ տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերման, ինչպես նաև մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա ազդելու վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում:	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեթոդների կատարելագործում	
5.	<i>Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում</i>	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում,	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումների, ՋԼՄ հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում,	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների իրականացում:	
6.	<i>Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում</i>	
	Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով օրենքով սահմանված կարգով իրականացնելու հետազոտություն, ստուգում, ուսումնասիրություն և (կամ) դիտանցում	տարվա ընթացքում

7.	<i>Ազատ տնտեսական մրցակցությունը սահմանափակող վարչական խոչընդոտների հայտնաբերում և դադարեցում</i>	
	պետական կառավարման մարմինների որոշումների նախագծերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	տարվա ընթացքում դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	
	պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումների ուսումնասիրություն	
	Օրենքի խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում	
	Օրենքի խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում	
8.	<i>Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիության պարզում,</i>	
	Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում:	ըստ անհրաժեշտության, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
9.	<i>ԶԼՄ հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում, թեժ գծի միջոցով արձագանքում</i>	տարվա ընթացքում
10.	<i>Տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերումը</i>	տարվա ընթացքում, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
11.	<i>Հասարակության տեղեկացվածության բարձրացում</i>	
	զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում	տարվա ընթացքում
	պետական մարմիններին, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակությանը տնտեսական մրցակցության սկզբունքների պահպանման վերաբերյալ իրազեկում և ներկայացում	
	զանգվածային լրատվության միջոցներով Օրենքի դրույթների մեկնաբանությունների ներկայացում,	
	ինտերնետային ցանցում on-line ռեժիմով Հանձնաժողով ներկայացված դիմումներին և բողոքներին արձագանքում	
12.	<i>Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակում, միջազգային համագործակցություն:</i>	
	Օրենսդրական դաշտի բարելավում, ինչպես նաև դրա վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում՝ իրավասու մարմիններին	մինչև 2010 թվականի 1-ին կիսամյակի ավարտը
	Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում	

	Եվրոպական և ԱՊՀ մասնակից պետությունների մրցակցային օրենսդրության հետ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման գործողությունների իրականացում, համապատասխան համաձայնագրերի կնքում:	
--	--	--

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, բացի օրենսդրությամբ ամրագրված գործառնություններից, Ծրագիրն իրականացվում է նաև մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովին դիմելու նպաստավոր պայմանների և վստահության մթնոլորտի ձևավորում՝ Օրենքի խախտման վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքելով (ներառյալ կանխարգելիչ միջոցառումները) և ձեռնարկված միջոցների մասին հանրությանն իրազեկելով:

2. Օրենքի խախտման համար պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիության մթնոլորտի ձևավորում՝ Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պարտավորություններ առաջացնող կամ պատասխանատվություն սահմանող որոշումների ընդունմամբ և դրանց կատարման նկատմամբ մշտական հսկողության իրականացմամբ:

3. Համագործակցություն՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,
- համապատասխան հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց նպատակն է տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

4. Պետական կառավարման մարմինների կողմից մշակված և տնտեսական մրցակցության հարցերին առնչվող իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների ներկայացում:

5. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում՝ պաշտոնական տեղեկագրերի հրատարակման, պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման, մամուլի ասուլիսների, ՋԼՄ-ների հետ համագործակցության, Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառնությունների, քննարկվող հարցերի, ընդունվող որոշումների, իրականացվող ծրագրերի և օպերատիվ ուսումնասիրությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման միջոցով:

6. Դատավորների և դատական ծառայողների տեղեկացվածության բարձրացում՝ միջազգային փորձագետների և Հանձնաժողովի համապատասխան մասնագետների մասնակցությամբ մրցակցային քաղաքականության իրականացման վերաբերյալ կազմակերպվող սեմինարների միջոցով:

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովը 2010 թվականին իր միջազգային համագործակցությունն ուղղորդելու է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանություն քաղաքականության կիրարկման քարոզչությանը և Հանձնաժողովի դերի բարձրացմանը: Աշխատանքներ են իրականացվելու Հանձնաժողովի և այլ շահագրգիռ մարմինների աշխատակիցների կարողությունների, ինչպես նաև ԲՈՒՀ-երի և այլ ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում գիտելիքների զարգացումը խթանելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա հասարակության շրջանում տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման առնչությամբ ձևավորել միասնական մոտեցում և հանրապետությունում զարգացնել «մրցակցային մշակույթը»:

Հանձնաժողովը նախատեսում է ընդլայնել համագործակցության հնարավորությունները միջազգային կառույցների և արտերկրի համանման մրցակցային մարմինների հետ, ինչպես նաև աշխատանքներ են կատարվելու մրցակցային օրենսդրության բարեփոխումների իրականացման ուղղությամբ, միաժամանակ, ապահովելով ՀՀ կառավարության «Հակաճգնաժամային միջոցառումների ծրագրով» ամրագրված գործողությունների կատարումը: Միևնույն ժամանակ շարունակվելու են նաև միջազգային համագործակցության ընդլայնման միտումները, ինչպես կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերի նախագծման, այնպես էլ արտերկրների համանման մարմինների հետ երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա կարգավորման տարբեր ոլորտներում մշակել մրցակցության քաղաքականության կիրարկման հայեցակարգեր:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում, Հանձնաժողովն անդամակցելով Միջազգային մրցակցության ցանց (ICN) կազմակերպությանը, շարունակելու է մասնակցել ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին: Քարոզչության խմբի հետ աշխատանքները շարունակվել են հիմնականում մրցակցության քաղաքականության կիրառման խնդիրների, շուկաների ուսումնասիրության և մրցակցային մարմինների ինստիտուցիոնալ զարգացմանն առնչվող հարցերի քննարկման ու միասնական մոտեցման որդեգրման ուղղությամբ համատեղ աշխատանքների իրագործմանը: Հանձնաժողովը մասնակցելու է նաև միաձուլումների, հակամրցակցային համաձայնությունների և միակողմանի վարքագծի հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի կողմից իրականացվող աշխատանքներին:

Հանձնաժողովը, ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատանքների շրջանակներում շարունակելու է մասնակցել համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը՝ հատկապես հակամրցակցային համաձայնությունների աշխատանքային խմբի ներքո համատեղ վարույթների ու փորձի փոխանակման նպատակով: Աշխատանքներ են կատարվելու 2009 թվականի ընթացքում Խորհրդի առաջիկա նիստերի օրակարգերում ընդգրկված արդիական խնդիրների քննարկման և դրանց հաղթահարման միջոցառումների իրագործման ուղղությամբ:

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ՀՀ-ԵՄ համագործակցության

շրջանակներում ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո համագործակցությունը հիմնականում ուղղված է լինելու ծրագրի նպատակային գործողությունների մշակմանն ու դրանց իրագործմանը՝ հատկապես պետական օժանդակության մեխանիզմների մշակման և դրանց հետագա կիրառման, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման հայեցակարգի նախագծման ու աշխատակազմի կարողությունների բարձրացման ուղղությամբ:

ԵՀԲ շրջանակներում Հանձնաժողովն, իրեն վերապահված իրավասությունների համաձայն նպաստելու է Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման գործընթացի համար ընթացող աշխատանքների իրականացմանը և ՀՀ-ԵՄ համագործակցության շրջանակներում գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2010 թվականին իրականացվելիք միջոցառումների կատարմանը, որոնք նշանակալիորեն կնպաստեն մրցակցային օրենսդրության, իրավական նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը՝ ԵՄ չափանիշներին:

Հանձնաժողովն ընդլայնելու է նաև համագործակցությունը տարածաշրջանային համակարգող կազմակերպությունների և միջազգային հաստատությունների՝ Համաշխարհային բանկի (ՀԲ/WB) և Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀ/GTZ), ինչպես նաև Եվրոպայի անվտանգության համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ/OSCE) հետ:

Հանձնաժողովն իր մշտական ուշադրության կենտրոնում պահելով կայուն զարգացմանն ուղղված միջոցառումների իրագործումը, որոնք կարող են նպաստել տնտեսական մրցակցության խթանման տեսանկյունից դիմակայելու համաշխարհային մարտահրավերներին և, նպատակ ունենալով զարգացնել տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման մեխանիզմները, 2010 թվականին շարունակելու է համագործակցել Համաշխարհային բանկի հետ, ինչը միտված է լինելու Հանձնաժողովի անկախության ամրապնդմանը, այդ թվում նաև՝ ֆինանսական, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացմանը ու արդիական խնդիրների քննարկմանը:

Հանձնաժողովը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ բանակցելու է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ/USAID), Կրթության զարգացման ակադեմիայի (ԿՁԱ/AED), Հայ-Եվրոպական քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնի (AEPLAC V)՝ հետ մրցակցության օրենսդրության հիմնական դրույթների առումով միջազգային փորձի ներկայացման և աշխատակիցների կարողությունների զարգացման ուղղությամբ համատեղ ծրագրերի նախագծման, ինչպես նաև մրցակցության օրենքի և կանոնների վերաբերյալ հանրության և բիզնես խորհրդատուներին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:

Հանձնաժողովը վերոնշյալ աջակիցների հետ մշակելու և իրագործելու է դատավորների ու դատական ծառայողների տեղեկացվածության բարձրացման միջոցառումների ծրագիր՝ միջազգային փորձագետների և Հանձնաժողովի համապատասխան մասնագետների մասնակցությամբ մրցակցային քաղաքականության իրականացման վերաբերյալ կազմակերպվող սեմինարների, գործնական այցերի և փորձի փոխանակման միջոցով:

Հանձնաժողովի աշխատակազմի վերապատրաստումը և ուսուցումը հանդիսանում է

միջազգային համագործակցության քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Ուսուցումը և փորձի փոխանակումը միջազգային համագործակցության ծրագրերի էական բաղադրիչն է, որի արդյունքում Հանձնաժողովի անդամներն ու աշխատակազմը մասնակցելու են վերապատրաստման դասընթացների, հանդիպումների և միջազգային համաժողովների, ինչպես նաև մրցակցության հիմնախնդիրների կանոնակարգման տարբեր կազմակերպությունների աշխատանքային խմբերի աշխատանքներին:

